



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Երևանի անվան հայկական
պետական մեթոդական համալսարանի

Ս.Ռ. Գևորգյան

«30» հունիսի 2022 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Գ.00.05 – «Բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Վահագն Սմբաթի Գևորգյանի «ՀՀ-ում տարածված դեղաբանական նշանակություն ունեցող որոշ մակրոսնկերի կենսաբանական ակտիվ նյութերի գնահատում» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՊՄՀ-ի «Էկոլոգիայի և կայուն զարգացման» ամբիոնի նիստում (արձ. թիվ 10, 17.06.2022թ.):

Նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար կենս. գիտ թեկնածու, դոցենտ Ս.Ա.Շողերյանը, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս.Հովհաննիսյանը, ամբիոնի աշխատակիցներ՝ մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ.Գ. Ավանեսյանը, դոցենտ Ս.Ս.Եղիազարյանը և կ.գ.թ., դոցենտ Ա.Ս.Գասպարյանը:

Վահագն Սմբաթի Գևորգյանի «ՀՀ-ում տարածված դեղաբանական նշանակություն ունեցող որոշ մակրոսնկերի կենսաբանական ակտիվ նյութերի գնահատում» թեմայով ատենախոսական աշխատանքը նվիրված է ՀՀ-ում լայն տարածում և աշձարհում բժշկական նշանակություն ունեցող 11 սնկատեսակների կողմից սինթեզվող և կուտակվող նյութերի, մասնավորապես երկրորդային մետաբոլիտների ու բժշկության մեջ և առօրիայում դրանց հնարավոր կիրառմանը:

Այդ սնկատեսակների վերաբերյալ գրականության մեջ առկա տվյալները տարատեսակ են ու երբեմն հակասական:

Վահագն Գևորգյանի կողմից ներկայացված ատենախոսությունը շարադրված է 109 էջի վրա: Այն կազմված է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատությունն ընդգրկում է 28 նկար, 7 աղյուսակ և համապատասխանում է ատենախոսական աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Օգտագործված գրականության ցանկն ընդգրկում է 121 անուն հայրենական և արտասահմանյան գրականություն: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել

են 10 գիտական աշխատանքներում, որոնցից 6-ը հոդվածներ են, իսկ 4-ը՝ գիտաժողովների նյութեր:

Ներածությունում ատենախոսը ներկայացնում է աշխատանքի արդիականությունը, հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, փորձաքննությունն ու հրապարակումները:

Հետազոտության նպատակն է եղել իրականացնել բժշկական նշանակություն ունեցող սնկատեսակների կողմից սինթեզվող և կուտակվող կենսաակտիվ նյութերի սկրինինգ՝ մասնավորապես երկրորդային մետաբոլիտների և դեղասնկերի հնարավոր կիրառությունն բժշկության մեջ:

Վերը նշված նպատակին հասնելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- իրականացնել սնկերի հավաք և նույնականացում,
- որոշել ընտրված մակրոմիցետների էքստրակտների հակաօքսիդանտային ակտիվությունը պոտենցիոմետրիկ չափման միջոցով,
- կատարել էքստրակտներում ընդհանուր ֆենոլային միացությունների քանակական գնահատում,
- կատարել էքստրակտներում ֆլավոնոիդների քանակական և որակական գնահատում,
- հաշվարկել էքստրակտներում կարոտինոիդների կոնցենտրացիաները,
- ամփոփել տվյալները և առաջարկել որոշ սնկատեսակներ տարբեր հիվանդությունների բուժման համար:

Հետազոտությունների արդյունքում հեղինակը առաջին անգամ կատարել է հանրապետությունում աճող որոշ մակրոսկոպիկ բազիդիավոր սնկերի երկրորդային մետաբոլիտների սկրինինգ, որի ընթացքում մշակվել և կիրառվել են մի շարք մեթոդներ, առաջարկվել հիպոթեզ:

Հեղինակի կողմից հմնովին փոփոխության է ենթարկվել գյուրություն ունեղող հակաօքսիդանտային ակտիվության որոշման պոտենցիոմետրիկ մեթոդը:

Պարզաբանվել են սնկերում առկա ֆլավոնոիդների մասին գրականության մեջ հայտնի քառտիկ տվյալները: Առաջին անգամ քննարկվել են հարցեր, որոնց պատասխանները հնարավորություն կտան բացահայտել սնկերի, ջրիմուռների և բույսերի էվոյուցիոն կապի մանրամասները:

Առաջարկվել է հիպոթեզ սնկային երկրորդային մետաբոլիտների կիրառությունը վիրուսային հիվանդությունների բուժման ժամանակ՝ անուղղակի միջամտության ձևով:

Ատենախոսության առաջին գլխուր նվիրված է գրական ակնարկին: Այստեղ բերվում են տեղեկություններ տարբեր երկրներում, տարբեր գիտնականների կողմից դեղաբանական նշանակություն ունեցող մակրոսնկերի կողմից կենսաբանական ակտիվ նյութերի սինթեզի վերաբերյալ կատարված հետազոտությունների մասին տեղեկություններ:

Այս գլխում՝ ըստ ենթակետերի ներկայացվում է ազատ ռադիկալների, կենսաբանական համակարգերում դրանց աղբյուրների, թթվածնի ռեակտիվ ձևերի, հակաօքսիդանտային պաշտպանության, սնկերում հանդիպող հակաօքսիդանտների (պոլիֆենոլներ, ֆլավոնոիդներ, կարոտինոիդներ), սնկերում հանդիպող երկրորդային մետաբոլիտների ասին անրամասն տեղեկություններ:

Երկրորդ գլխը նվիրված է հետազոտության օբյեկտին, նյութերին և մեթոդներին: Օբյեկտը Հայաստանում լայնորեն տարածված և պոտենցիալ դեղաբանական նշանակություն ունեցող 11 սկատեսակներն են (*Agaricus bisporus*, *Armillaria ellea*, *Calvaria gigantea*, *Cerioporus squamosus*, *Gimnoderma lucidum*, *Hipholoma fasikulare*, *Pleurosus ostreatus*, *Schizophyllum commune*, *Scleroderma verrucosum*, *Trametes versicolor*, *Trichaptum abiecinum*):

Ուսումնասիրությունների համար ընտրվել են մի շարք կենսաքիմիական մեթոդներ, որոնք լայնորեն կիրառվում են սնկերի երկրորդային մետաբոլիտների ուսումնասիրության ժամանակ: Սակայն հեղինակի կողմից կիրառվել են նաև որոշ մեթոդներ, որոնք կիրառվում են բույսերի երկրորդային մետաբոլիտների ուսումնասիրության ժամանակ, հետևաբար այդ մեթոդները հեղինակի կողմից ձևափոխվել են, որպեսզի ստացվեն առավել ճշգրիտ տվյալներ:

Աշխատանքի երրորդ գլուխը նվիրված է հետազոտության արդյունքներին և ուսումնասիրված սնկերի նկարագրությանն ու վերլուծությանը: Նեկայացվում են ուսումնասիրված 11 սնկատեսակների ժամանակակից դասակարգումը, էկոլոգատրոֆիկական խմբերը և յուրաքանչյուր տեսակի մորֆոֆիզիոլոգիական, էկոլոգիական առանձնահատկությունները, կենսաքիմիական բաղադրությունը և ավանդական ու արդի բժշկության մեջ կիրառումը: Հեղինակի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում ստացվել են մի շարք կարևոր տվյալներ, որոնք ներկայացված են եզրակացություններ բաժնում:

Եզրակացությունները տրամաբանորեն բխում են ատենախոսության բովանդակությունից և համապատասխանում են ատենախոսի առջև դրված խնդիրներին:

Սեղմագիրն ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանն ու կառուցվածքին:

Ատենախոսության վերաբերյալ որպես դիտողություններ և առաջարկություններ՝ Միաժամանակ պետք է նշել, որ ատենախոսական աշխատանքում առկա են որոշ թերություններ, որոնց վրա կցանկանայինք հրավիրել ատենախոսի ուշադրությունը.

- Աշխատանքի տեքստային մասում սնկատեսակների անվանման մեջ հեղինակները նշված չեն:
- Տեքստում առկա են որոշ տեխնիկական թերություններ (վրիպակներ, տառասխալներ- էջ 43 , 60, 69)

Սակայն նշված թերությունները չեն նսեմացնում ատենախոսության արժեքը:

Հետազոտության արդյունքները հետաքրքրություն կառաջացնեն և կարող են կիրառվել՝

ա/ բժշկության և գյուղատնտեսության մեջ,

բ/ նոր դեղամիջոցների արտադրության ժամանակ,

Ուսումնասիրված սնկերը իրենց իմունոմոդուլյատոր, վազոպրոտեկտիվ և տոնուսավորող ազդեցություններով կարող են հանդիսանալ այլընտրանքային դեղամիջոցներ այնպիսի հիվանդությունների դեմ պայքարում, ինչպիսիք են աֆրիկյան ժանտախտը և կորոնավիրուսը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության նյութերը, հիմնական դրույթներն ու ստացված արդյունքները՝ որպես նորույթ, ունեն գիտական և գործնական արժեք: Ըստ բովանդակության, գիտական և գործնական նշանակության ատենախոսությունը համապատասխանում է Գ.00.05 – «Բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա» մասնագիտությանը:

Վահագն Սմբաթի Գևորգյանի «ՀՀ-ում տարածված դեղաբանական նշանակություն ունեցող որոշ մակրոսնկերի կենսաբանական ակտիվ նյութերի գնահատում» թեմայով ատենախոսությունն ավարտված լիարժեք գիտական աշխատություն է, իր արդիականությամբ, փաստացի նյութի ծավալով, գիտական նորույթով, տեսական և կիրառական նշանակությամբ լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Վահագն Սմբաթի Գևորգյանը արժանի է Գ.00.05 – «Բուսաբանություն, սնկաբանություն,

Էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

«Էկոլոգիայի և կայուն զարգացման»
ամբիոնի վարիչի պաշտոնակատար
կենս. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Ս.Ա.Շոդերյան

«Էկոլոգիայի և կայուն զարգացման»
ամբիոնի դոցենտ, կենս. գիտ. թեկնածու՝

Ա.Ա.Գասպարյան

Ս.Ա.Շոդերյանի և Ա.Ա.Գասպարյանի ստորագրությունները հաստատում եմ՝

ՀՊՄՀ գիտ. թեկնածուի և
մանկ. գիտ. թեկնածուի դոցենտ

Ս. Ս. Իսպիրյան

«20» հունիսի 2022 թ.

